

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի

07.10.2022 թ. կայացած թիվ 4.22-23 նիստի

Ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից ներկա էին 29 –ը:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. ԵՊՀ ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող ֆ.մ.գ.թ. Վաղիմ Ռոբերտի Օհանյանի **Ա.04.02** «Տեսական ֆիզիկա» մասնագիտական դասիչով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար լինելու հարցը:
2. ԵՊՀ Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Վարազդատ Ստեփանյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
3. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում իրականացվող գիտական թեմաների հաշվետվությունների ընդունման հարցը:

Լսեցին – ԵՊՀ ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող ֆ.մ.գ.թ. Վաղիմ Ռոբերտի Օհանյանի **Ա.04.02** «Տեսական ֆիզիկա» մասնագիտական դասիչով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար լինելու հարցը:

Որոշեցին՝ Հաշվի առնելով Վ. Օհանյանի կատարած մանկավարժական և մասնագիտական գործունեությունը, երաշխավորել Վ. Օհանյանի **Ա.04.02** «Տեսական ֆիզիկա» մասնագիտական դասիչով թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը:

Խնդրել ԵՊՀ գիտական խորհրդին հետագա ընթացք տալու համար:

Լսեցին՝ ԵՊՀ Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Վարազդատ Ստեփանյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ 1. Հաստատել Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Վարազդատ Ստեփանյանի՝ «Քվանտային և դասական երևույթները կենսապոլիմերների կառուցվածքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ կոնդենսացված վիճակի ֆիզիկա, մասնագիտությունը՝ Ա.04.07:

2. Ատենախոսության թեմայի գիտական ղեկավար նշանակել ֆ.մ.գ.դ. Եվգենի Մամասախլիսովին:

3. Միջնորդել ԵՊՀ ռեկտորին հաստատելու Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

Լսեցին – ԵՊՀ ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի առաջատար գիտաշխատող Վալերի Մոսի Հարությունյանի 21T-1C324 ծածկագրով «WC-Co-C(ալմաստ) կոմպոզիտների բարձր ճնշումային և ջերմաստիճանային սինթեզ մեծ արդյունավետությամբ կտրող տարրերի ստեղծման նպատակով» վերնագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Վալերի Մոսի Հարությունյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Օպտիկայի ամբիոնի պրոֆեսոր ֆ.մ.գ.դ. Ռաֆիկ Հակոբյանի 21AG-1C088 ծածկագրով «Հեղուկ բյուրեղային ալիքաթիթեղներ օպտոմեխանիկական և օպտոէլեկտրոնային արդյունաբերության համար» վերնագրով Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Ռաֆիկ Հակոբյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Օպտիկայի ամբիոնի ասպիրանտ Մաքսիմ Լիպարիտի Սարգսյանի ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագրի (2021թ.) շրջանակներում ֆիզիկայի ֆակուլտետում ընթացող 21AA-1C007 ծածկագրով "Անիզոտրոպ էլաստոմերների մեխանիկական և կողմնորոշումային ձևախախտումների փոխազդեցությունը" վերնագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Մաքսիմ Լիպարիտի Սարգսյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ Տիգրան Կարենի Ղուկասյանի ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի Ասպիրանտների և երիտասարդ

հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագրի (2021 թ.) շրջանակներում ֆիզիկայի ֆակուլտետում ընթացող 21AA-1C021 ծածկագրով "Կիսահաղորդչային նանոկառուցվածքների օպտիկական բնութագրերի ուսումնասիրություն էլեկտրոնֆոնոն փոխազդեցության առանձնահատկությունների հաշվառմամբ" վերնագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Տիգրան Կարենի Ղուկասյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Միջուկային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, ամբիոնի վարիչ Անահիտ Բալաբեկյանի 21T-1C164 ծածկագրով «Ծանր միջուկների ինքնական և հարկադրական բաժանման հազվագույտ պրոցեսներ» վերնագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Անահիտ Բալաբեկյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Ե. Մամասախկիսովի 21T-1F307 ծածկագրով «Կենսասենսորների աշխատանքային հատկությունները և նուկլեինաթթուների կառուցվածքը և հիբրիդիզացիան» վերնագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Ե. Մամասախկիսովի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Վարդանյան Իշխանի 21T-1F115 ծածկագրով «Կայունացնող և ապակայունացնող համալուծիչների ազդեցությունը ԴՆԹ-ի G-հարուստ և C-հարուստ կոմպլեմենտար շղթաների խառնուրդի կոնֆորմացիոն բաշխման վրա» վերնագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Վարդանյան Իշխանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Լուսինե Ալոյանի 21T-1F114 ծածկագրով «Մետաղ պարունակող միացությունների ազդեցությունը ԴՆԹ-ի կառուցվածային փոփոխությունների վրա էլեկտրոնային փնջով ճառայթահարման դեպքում» վերնագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Լուսինե Ալոյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Նելլի Կարապետյանի 21T-1F244 ծածկագրով «Կենսաբանորեն ակտիվ միացությունների ազդեցությունը արյան ԴՆԹ-ի կառուցվածքային առանձնահատկությունների վրա նորմայում և պաթոլոգիայում» վերնագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Նելլի Կարապետյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր ֆ.մ.գ.դ. Արամ Սահարյանի 21AG-1C047 ծածկագրով «Արտաքին դաշտերով և տոպոլոգիայով մակաձված քվանտային երևույթներ դաշտի տեսությունում և կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայում» վերնագրով Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Արամ Սահարյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր ֆ.մ.գ.դ. Արշակ Վարդանյանի **21AG-1C048** ծածկագրով «Գրաֆենում տաք լիցքակիրների դինամիկայի կառավարում արտաքին դաշտերով եւ բնեռային տակդիրների ընտրությամբ: Գրաֆենային հենքով տաք լիցքակրային տրանզիստորի մոդելի լավարկում եւ գործնական իրականացում» վերնագրով Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Արշակ Վարդանյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր ֆ.մ.գ.դ. Մարտին Գևորգի Գրիգորյանի 21AG-1A066 ծածկագրով «Տարբեր իմաստներով ունիվերսալ Ֆունկցիաների գոյությունն ու կառուցվածքը և որոշ դասերի ֆունկցիաների մոտարկումներ» վերնագրով Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Մարտին Գևորգի Գրիգորյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Գիտական խմբերի մեկնարկի աջակցություն – 2020 ծրագրի

Ծածկագիր՝ 20TTSG-1C008

Վերնագիր՝ Հեղուկ բյուրեղային խորը նեյրոնային կառուցվածքներ (ՀԲ-ԽՆԿ)

Հաշվետու ժամանակահատվածը՝ 01.10.2021 - 30.09.2022

Ղեկավար՝ Ռաֆայելյան Մուշեղ Սպարտակի

հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Մուշեղ Սպարտակի Ռաֆայելյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի 2021մրցույթի

Ծածկագիր՝ 21T-1C331

Վերնագիր՝ Օպտիկական խելացի նկարահանում տուրբուլենտ միջավայրերի միջով

Հաշվետու ժամանակահատվածը՝ 01.10.2021 - 30.09.2022

Ղեկավար՝ Ռաֆայելյան Մուշեղ Սպարտակի

հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Մուշեղ Սպարտակի Ռաֆայելյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծի իրականացման հայտերի 2021 մրցույթի՝

Ծածկագիր՝ 21APP-1C016

Վերնագիր՝ Լայնամասշտաբ կոհերենտ օպտիկական մատրիցային բազմապատկիչ

Հաշվետու ժամանակահատվածը՝ 01.10.2021 - 30.09.2022

Ղեկավար՝ Ռաֆայելյան Մուշեղ Սպարտակի

հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Մուշեղ Սպարտակի Ռաֆայելյանի տարեկան հաշվետվությունը:

Լսեցին – ԵՊՀ Ֆիզիկայի ԳՀ ինստիտուտի ավագ գիտաշխատող Ֆ.մ.գ.թ.ւ Արամ Մանասելյանի “Քվանտային կետերով ցանցերի և արևային տարրերի ֆոտոէլեկտրական բնութագրերի արդյունավետ կառավարում” վերնագրով և 21T-1C247 ծածկագրով գիտական թեմայի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Արամ Մանասելյանի տարեկան հաշվետվությունը:

Ֆիզիկայի Ֆակուլտետի

Գիտական խորհրդի նախագահ՝



Ռ.Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝



Գ.Հ. Հովհաննիսյան